

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ  
ԵԿԵՂԵՑԻ

# Holy Cross Armenian Church

8 Մայիս 1979

Ապրիլի 21, 1979

Հոգեշնորհ  
Տէր Ազգէն Ծ. Արդ. Քէշիշեան  
Առաջնորդական Փոխանորդ  
Գանատայի Հայոց  
Թորոնթօ.

Հայր Սուրբ,

Ժիական Խորհուրդիս անենապետ Տօրթ. Արդան Այնաճեանի ուղղեալ Ձեր  
27 Ապրիլ 1979 թուակիր նամակը ստացանք:

Ներքեակ Ձեզ կը յանձնենք Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ անուսով  
պատկան իշխանութեանց մօտ կատարուած դիմումագիրները եւ ստացուած  
վաւերագիրները: Ասոնցմէի ինքօրօրէշնի վաւերաթուղթը արդէն 10 Յուն-  
ւար 1979 թիւականին, Ձեր ալ ներկայութեան, պաշտօնական ժողովի մը ըն-  
թացքին, Արեւելեան Թեմի Առաջնորդ Սրբազանին փափարին համաձայն իրեն  
տրուած էր, այն հասկացողութեամբ, որ Առաջնորդ Սրբազանը թիմական խոր-  
հուրդի Ատենապետ Դատաւոր Ժան Նաճարեանի հետ խորհրդակցարար, այս ին-  
քօրօրէշը թեմէն ներս անելու կարելիութիւնները պիտի որոշուին սխիւրթ  
ինչպէս Ձեզ յայտնի է, ըստ Վեհափառ Հայրապետի հրահանգին 16 Ապրիլ է  
ի վեր առ ժամաբար դադարեցուցած ենք Ս. Դատարանները եւ ծիսակատարութիւն-  
ները, որպէսզի նոյն հրահանգին համաձայն Դուք, որպէս Առաջնորդական փո-  
խանորդ Գանատայի Հայոց, նշանակէք հոգեւորական մը վերսկսելու համար  
Ս. Դատարաններու եւ կատարելու ծիսակատարութիւններ, որոնց դիմումները  
արդէն հսկ ստացած ենք:

Այսու կ, ուզենք Ձեր ուշադրութեան յանձնել, թէ հակառակ Վեհափառ  
Հայրապետի որոշումին եւ Ձեզի տրուած յստակ հրահանգին, որոնք 17 Ապրիլ  
1979ին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ մօտաւորապէս 120  
ազգայիններու ներկայութեան Ձեր կողմէ կարդացուեցան, տակաւին Ս. Երրոր-  
դութիւն Եկեղեցւոյ ծիսական Խորհուրդի մաս մը անդամներ ու իրենց կարգ  
մը ընկերները, թէ՛ Եկեղեցւոյ մէջ եւ թէ՛ տուն տուն հեռաձայնելով Ս. Խաչ  
Հայաստանեայց Եկեղեցին թեմական իշխանութեան շնորհակալութեամբ, Գանատական  
Անջատ Թեմի հաստատումը յետաձգելու եւ Արիս Արքազանը քաղաքէս հեռացը-  
նելու ընդլծով գրուած խնդրագրի մը ստորագրութիւն կը շնան հաւաքել:

Վեհափառ Հայրապետի իրձ եւ հրահանգներուն ղէմ կազմակերպուած ըլլա-  
լով սկսուած այս շարժումը, հանդարտելու փուլին մէջ մտնող գաղութս  
կրնայ շատ աւելի տազնապալից իրողութեան մը առջեւ բերել:

Վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ, վստահելով Ձեր լայնախոհութեան  
եւ իմաստութեան, ինչպէս Վեհափառ Հայրապետն ալ իր հեռագրին մէջ գրած է  
Ձեզմէ անգամ մը եւս կը խնդրենք որ անմիջապէս հոգեւորական մը նշանա-  
կէք, որպէսզի բնականոն ընթացքը վերահաստատուի ու աղիթ շննծայուի  
անոնց, որոնք Հայրապետական իրձ եւ հրահանգներու շնորհակալով, գաղութիս  
գոյգ Եկեղեցիներուն ապագայ համագործակցութիւնը այսօրունէ կացինահա-  
րել կ'աշխատին:

Ստորեւ կը ներկայացնենք ծիսական Խորհուրդիս այժմու անձնակազմը:  
Փափաքելի է, որ Արեւելեան Թեմի կանոնադրէն երկվեցնակ մը մնալ  
տրամադրէք:

ՄԱՐԿԻ ԽԱՉ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross  
Armenian Church

-2-

Մենք՝ Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդս եւ մեր համայնքը պատրաստ է Ձեր շուրջ հաւաքուիլու եւ համաործակելու ի շահ մեր գաղութի համերաշխութեան եւ ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ։  
Սպասելով Ձեր անմիջական շինարար անօրինութեան, յարգանքով

Ի. Դիմաց  
Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդի

*Յակոբ Նար*

*Սոթք. Ա. Վ. Այնաճեան*

Յակոբ Նար  
Ատենադպիր

Սոթք. Ա. Վ. Այնաճեան  
Ատենապետ

Սոթք.	Վարդան	Այնաճեան	Ատենապետ
Տիար	Արմէն	Քիչրքճեան	Թոխ Ատենապետ
Տիար	Յակոբ	Նար	Ատենադպիր
Սոթք.	Վահէ	Սվաճեան	Թոխ Ատենադպիր
Տիար	Դեւոնդ	Շահմելիքեան	Գանձապահ
Տիար	Անդրանիկ	Զազարեան	Թոխ Գանձապահ
Տիար	Սոլորէն	Էվրան	Խորհրդակց
Տիար	Եղիա	Թորոսեան	
Տիար	Մարտիկ	Հէքիմեան	
Տիար	Գրիգոր	Մազմանեան	
Տիար	Լեւոն	Չէօմլէքճեան	
Սոթք.	Վաչէ	Քերամեմիլիեան	
Տիար	Յակոբ	Քէլէշեան	
Տիար	Ժան	Ֆէնէքճեան	

Սերտակ

1. Application for registration
2. Certification of registration
3. Letters Patent
4. Holy Cross Armenian Church By-Law No. 1